

- ԺԱ. Թղ. 103ա. «Եւ տեղ վասն եղին պատմութիւնն: Եղն Դ ցեղ կու լինի»:
- ԺԲ. Թղ. 103բ. «Պատմութիւն վասն մշկին թէ քանի ցեղ է: Մուշկն որ իւրմէ լինի...»:
- ԺԳ. Թղ. 104ա. «Պատմութիւն վասն աղուեսու»:
- ԺԴ. Թղ. 104բ. «Պատմութիւն վասն աղանուէն»:
- ԺԵ. Թղ. 105ա. «Պատմութիւն վասն սալորին որ է դամոնն»:
- ԺԶ. Թղ. 105ա. «Վասն մըրտիտակին: Սահակն սասց թէ այն է որ ի լեբունքն լինի»:
- ԺԷ. Թղ. 105բ. «Վասն աղբրանց արիւնին: Ինքն ի յամանու կղզին լինի...»:
- ԺԸ. «Վասն խնկին... որ է լուպան»:
- ԺԹ. Թղ. 106ա. «Վասն զուլուկունա: Պապունաճն, որ է գետնի խնծորն...»:
- Ի. Թղ. 106ա. «Վասն զուլուկուն (զուլուկուլադի)»:
- ԻԱ. Թղ. 106բ. «Վասն աղին: Եւ սակ Դէտոկորիդոս թէ աղն կապող է...»:
- ԻԲ. «Վասն նէֆտին»:
- ԻԳ. Թղ. 107ա. «Վասն աղբ դարձային»:
- ԻԴ. Թղ. 107ա. «Վասն պայտանին»:
- ԻԵ. «Վասն տարչինին»:
- ԻԶ. Թղ. 107բ. «Վասն շէքերին»:
- ԻԷ. «Վասն ճաթրինին»:
- ԻԸ. Թղ. 108ա. «Վասն տորոնին»:
- ԻԹ. «Վասն Փլբուլին... որ է Փոկնկ պիպէն»:
- Լ. Թղ. 108բ. «Վասն քարոսին... որ է նեխուրն»:
- ԼԱ. «Վասն քամունին, ... որ է քինուն, որ է չամանն»:
- ԼԲ. «Վասն քուտաթին»:
- ԼԳ. «Վասն քաֆուրին»:
- ԼԴ. Թղ. 109ա. «Վասն քէպապիէլին»:
- ԼԵ. «Վասն դեղին սուսամին»:
- ԼԶ. «Վասն վայրի հազարին»:
- ԼԷ. Թղ. 109բ. «Վասն մատուտակին»:
- ԼԸ. «Վասն պախրու եղին»:
- ԼԹ. «Վասն կոտիմին»:
- Խ. Թղ. 110ա. «Վասն սեխին»:
- ԽԱ. «Վասն սոյխին (= սոխ)»:
- ԽԲ. «Վասն տղաին»:
- ԽԳ. Թղ. 110բ. «Վասն փրփրեմին»:
- ԽԴ. «Վասն էֆլիմոնին... որ է դօճա մորու»:
- ԽԵ. Թղ. 111ա. «Եւ յիշեմք գիտարգա-հար խոտն, զոր Գրիգոր աստուածարանն

զովէ ի գիրքն, որ ասեն արեւական մայր, նշանն այն է, Դ տերեւ կու տայ, խաչանման տերեւն սխտի ի վրայ գետնի, եւ որձան պոքն ի մէջն կու ելանէ կոք քանի վարով մի...»:

Վերջը՝ Թղ. 111բ. «Եւ այս է մեկնութիւն Դիոնէսիոսի իմաստասիրի, որ աղանատես եղեւ համասփիւս ծաղկին, որ եւ բանալիք է ամենայն փակած բանի անուշա-լոր է որ ի ճախ ունի յայն ի տերեւի եղերն կարմիր եւ լուրջ լինի զինչ զաղեղնակն որ իջանէ ծաղկին ծիրանաղոյն է, կարմիր դեղ-նասփիւս, կապուտուակ է: Ի նմանապէս ամենայն իմաստասիրաց եւ զիտնականաց եւ ուսումնաւորաց, եւ յորժամ առնեն զնա ի Հոռոմ ձեղն խոտնն, քրսեն ի ձեռքն եւ ի ոտքն ի երեսն, եւ զնեն զբերանն, ՀԲ աղբին լիզուն խոտն, եւ ԺԲ աղբին զիրն զրէ եւ կարդայ, եւ յորժամ ի լեռն ելանես, ամենայն ծաղկի խոտն ընդ քեզ, եւ սակ զէ ինչ իրաց մեծ խուք ի լեռն Գարունից ի կարնոյ գա-զաքն, որ է երգրում, ի Բարգոյ լեռն ի ձորն մասանց ի դաշտն մասեաց որ հայի խախտայ զնա՝ զիտ ի զլուին վարապայ ի բլուրն լե-րանց Գ վէժ կայ ի մէջ վիմացն գտանես ի սահման ինձորեց, Գ ձոր կա՛ խոր ի հոն գտանես զչնորհալի ծաղիկա, հաստատեայ ի յուսնիս ամսոյն ԻԵ. եւ ի քաղոց ԺԱ. Գ օր պաք կացիր եւ աղաչէ զհոյին սուրբ որ տայ քեզ. ինքն պիտի ելանէ ի Ա. ճղէ, եւ բաժանի Գ՛ ձիւղ, եւ ասեն թէ երբ ծաղիկն ուտէ օձն զեա մարդ ու զլուս մնայ աչք քիթ բերան բաց զսպէ ըզքեզ վասն օձին եւ յաստուած ուսացիր...»:

5. Թղ. 112ա. «Վասն գործաւորութիւն գեղերոյս այս է: ԿԶ: Լատիֆ, որ է նուրբ, անոր ասեն որ զեռ մեր բնական տաքութիւն հասնի...»: — Վերջը՝ «Իտաացիր որ այս է կր գործաւորութիւն գեղոցն» [հմմտ. Ամիր-աովլաթի «Անգիտաց Անպէտ», Տաշեան, Յուլիս, էջ 199, 2]:

Բ. Թղ. 117ա. «Ամարիկալիս, որ է գե-ղին սուսամն, թէ զինքն կանայքն մանոր ձե-ձեն եւ խմեն, կամ մեղրով շաղուն...»:

Գ. Թղ. 121ա. «Վասն ստից Հաւուն ան-բրժչկելի գեղն աս է»:

Դ. Թղ. 124ա. «Մաճուն մուղալի: Առ մէջ օր սուլէ յմանի, օւղ էրլիք, պատեանի հաւնա...»:

Գեղերու այս շարքը կ'ընդհատի թղ. 117բէն անդին, որուն կը յաջորդեն նոր զրուած մի քանի աննշան զրուութիւններ եւ պարագ էջեր:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ. Բուն յիշատա-կարանը կը պահուի կայ հետեւեալ ծանօթու-թիւնը միայն, որ սակայն սեւէ յիշատակու-թիւն չ'ըներ ձեռագրիս թուականի, տեղի եւ զրչի մասին:

Թղ. 35ա. «Յայնուն Աստուծոյ տէր իմ Յիսուս... որ տուեալ ես կարողութիւն եւ իմաստութիւն իմաստասիրաց որ ընտրեալ են եւ իմացեալ շնորհօքն հողոցն սրբոյ ըստածունն զեղոց ի վերայ ամենայն ցաւի... եւ բարեխօսութեամբ սուրբ աստուա-ծածնին եւ սուրբ Դուխս աւետարանիչին՝ եւ սուրբն Պանդելիոս անարձաթ բժշկին եւ սուրբն Կողմաս եւ Դամիտայնոս իմաստուն եւ խօտածարակ բժշկացն սոցին բարեխօսու-թեամբն յիշեցէք եւ զմեզ ամէն»:

27.
Մ Ա Շ Տ Ո Յ
Ի Ս Լ Ի Վ Ե Ն

ԹՈՒՂՈՒՔ՝ 297: — ԵՋՔ՝ 594: — ՄԵՆՈՒԹԻՒՆ՝ 19 X 12 1/2 X 4 1/2: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին՝ 14 1/2 X 9 1/2: — ՏՈՂՔ՝ 16—17: — ՆԻԻԹ՝ բուլք սովորա-կան, հաստ եւ լաւ ողորկեալ: — ԿԱԶՄ՝ նոր կաշե-կան, հաստ եւ լաւ ողորկեալ: — ԴԱՏԱՐԿ՝ բղ. 1ա, պատ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — ԴԱՏԱՐԿ՝ բղ. 1ա, 3բ եւ 297: — ԳԻՐ՝ նուրբ բարբոցի: — ՆԿԱՐՔ՝ եւ այլն՝ չուցի: — ԺԱՄԱՆԱԿ՝ 1887: — ԳՐԻՉ՝ Ման-եսի Յարութիւն Գաբրիէլեան: — ՏԵՂԻ՝ Սիլվէն: — ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ՝ Սիլվէնի Ս. Ստեփանոս եկե-ղեցայ:

Մատենան է ՄԱՇՏՈՅ: Թղ. 3ա (Մաշ-տոց յորում աւանդին սրբազան արարողու-թիւնը Ազգիս ըստ Սահմանադրութեան սուրբ եկեղեցւոյս Հայոց. ի հայրապետութեան Տ. Տ. Մակար կաթողիկոսի Ամենայն Հայոց, եւ ի պատրիարքութեան Կ. Պոլսոյ Տ. Յա-րութիւն Ս. Արքեպիսկոպոսի Վեհապետեան, 1887):

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ. 1. Թղ. 1բ. «Նախկին սուրբ Փրկչի Աշակերտ Մահտեսի Յարութիւն Գաբրիէլեան, 1887»:

2. Թղ. 2ա. «Նախարան եւ Յիշատակա-րան Ձեռագրաց. ինչպէս հայ կերակուր է բան մարմնոյ, նոյն եւ աւելի եւս է սրբազան Արա-մարմնոյ, նոյն եւ աւելի եւս է սրբազան Հոգ-րողութիւնը իւրաքանչիւր քրիստոնէի հող-ոցն: Չայս ի մանուկ տիոց զիտրձ առեալ եւ ըստ կարի գործով կատարելով ի Կոս-տանդնուպոլիս ծնեալ եւ սնեալ եւ ամուս-

նացեալ, մեղապարտ եւ անարժան ծառայ, մահտեսի Յարութիւն (45 տմայ) նախկին Սուրբ Փրկչի աշակերտ, որդի նաւակավար Գաբրիէլի՝ եղբոր խոհեմադարդ եւ մաքրա-կրօն Տէր Բարսեղ Քահանայի Աթոռանիստ Մայր Եկեղեցւոյն Սուրբ Աստուածածնի ի Գուսպարու:

Իսկ պարագայից բերմամբ նախ յԱզրիա-նուպոլիս եւ ապա 1882 Ապրիլ 11 եկեալ Իս-նուպոլիս (Արեւելեան Բուսելի) գտի անդ մի լիմիեա (Արեւելեան Բուսելի) գտի անդ մի եկեղեցի յանուն Ս. Ստեփաննոսի շինեալ ի 1831, եւ տունս Հայոց իբր 50: Բայց առ ի չ'ոյցէ զբաւաճառի ոչ գտեալ յարմար Աղօթքի վերաբերեալ գիրք, ջան ի գործ եղի ապաւինելով յօղնականութիւն հողոցն սրբ-ոյ, մատամբս ձեռագրել, սոյն սրբակրօն Արարողութիւնն այսինքն Մաշտոց: Խնամով եւ զգուշութեամբ սկսեալ 1887 Հոկտ. 21, եւ ի կատար հասուցեալ Նոյ. 19:

Արդ եղի զայս ձեռագիր մատենան աղօ-թից ի վայելումն եւ ի թողութիւն ինձ մե-ղաւորիս ի կենդանութեան: Եւ յետ իմոյ դաւորիս ի կենդանութեան: Եւ յետ իմոյ դաւորիս յաստեացս եղիցի յիշատակ Ս. Եկե-կանելոյ յաստեացս եղիցի յիշատակ Ս. Եկե-ղեցւոյ ուր եւ գտանիցի: Որք վայելեն եւ ըն-թեանուն, յիշեցեն զիս զբաղմամբս եւ թեոնուն, յիշեցեն զիս զբաղմամբս իմ. եւ զձնորս եւ զարեանառու մերձաւորս իմ. եւ որք յիշեն յիշեալ եղիցի ի Քրիստոսէ Յի-սուսէ, ամէն: Մահտեսի Յարութիւն Գա-բրիէլեան»:

Ն. ԳԱՍԱՊԵԱՆ

(Շարունակելի:)

ԳՈՐԳԱՏԻ ՀԱՅ ՈՒՍԵՆՈՂՈՒԹԻՒՆԸ

Տարիներ ատաջ անուցած փափագս՝ այցելել Դորպատ ու տեղոցն վրայ ուսում-նասիրութեան համար նիւթեր հաւաքել այդ նշանաւոր համալսարանական քաղաքի հայ ուսանողութեան մասին, ի կատար ածուե-ցաւ 1939 թ. ամառը:

Բերլինի իմ պաշտօնավարած համալսա-րանին կից Արեւելեան Լեզուների Սեմինարի վերատեսուչ Պրոֆ. Կ. Շարճիզ ծանօթա-վարութեամբ հարցապէս ու նիւ-նուրով մտադրութեանս՝ բարոյապէս ու նիւ-նուրով մտադրութեանս նրա իրազործ-թապէս աստար հանդիսացաւ նրա իրազործ-ման: Եւ այսպէս, 1939 թ. Յուլիս 15-ման: Եւ նուիրեցի զօրպատեան ճամբոր-դութեան, նախապէս թղթակցութեան մէջ դուրսեան, նախապէս թղթակցութեան մէջ մտած լինելով այնտեղի համալսարանի, նրա միջոցով նաեւ Էստոնիայի պետական զիւս-

անել միակ հաւանական եւ ընդունելի են-
թաղութիւնը. այն որ՝ նա (ինչպէս եւ վե-
րոյիշեալները) Դորպատի համալսարանը յա-
ճախած է որպէս ազատ ունկնդիր: Այս-
պէս, Արովեան երբեք չէր թոյլ տայ իրեն
պնդելու եւ ուրիշներն էլ չէին հաստատի
այդ, թէ ինք ուսած է Դորպատի համալսա-
րանում: Եւ ազատ ունկնդրի հանգամանքը
լիովին տալիս էր նրան — եւ առհասարակ
բոլորին — այդ իրաւունքը: Յայտնի է որ
հետագային Գերմանիայի ու առհասարակ
Եւրոպայի զանազան բարձրագոյն դպրոց-
ներ բազմաթիւ հայ երիտասարդներ յաճա-
խած են որպէս սոսկական ազատ ունկնդիր-
ներ, եւ այդ պարագան երբեք չէ արգելած
որ նրանք եւս դասուն ուսանողները՝
շարքը: Այդպիսիներէն շատերը լրջօրէն հե-
տեւած են բարձրագոյն ուսմանց ու հետա-
գային, որպէս համալսարանաւարտ անձեր,
անուն հանած գրական, կրթական եւ հան-
րային այլ ասպարէզներում: Դրանցից մէկը
եւ առաջինն է եղած ահա եւ իսախառուր Ար-
վեան: Չունենալով դիմնադրայի եւ կամ
առհասարակ ուսէ միջնակարգ դպրոցի ա-
ւարտման վկայական՝ նա բնականաբար չէ
էլ ընդունուած որպէս իսկական ուսանող:
Պարրոտի հովանաւորութիւնը եւ բարեկա-
մութիւնը չէ՛ր կարող նրան օգնել այդ բա-
նում ու խախտել տալ համալսարանի կանո-
նադրութիւնը: Արովեան ժամանակ ու յար-
մարութիւն, ըստ երեւութի նաեւ նպատակ
չէ ունեցած նախապատրաստուելու՝ դիմնա-
դրայի աւարտման վկայական ձեռք բերելու
համար, որպէս զի կարողանայ ընդունուել
իսկական ուսանող: Այդ արել է օրինակ,
մենք գիտենք այժմ, Ստեփան Նազարեանց
(տե՛ս վարը): Ճր. Պարրոտի եւ ուրիշ պրո-
ֆեսորների ու բարեկամների քով Արովեան
դասեր առել է, այդ յայտնի է իր դորպա-
տեան Յիշատակարանից: Սակայն այդ դա-
սերը նպատակ են ունեցել միայն՝ լրացնելու
Արովեանի ընդհանուր, միջնակարգ կրթու-
թեան եւ ուսման թերին: Այդ պարագան,
ինչպէս նաեւ Ճր. Պարրոտի բարեկամու-
թիւնը եւ այլ կարգի նպաստաւոր պայման-
ներ թոյլատու են եղած, անտարակոյս, որ
Արովեան այնուհետեւ համալսարան ընդու-
նուի որպէս ազատ ունկնդիր, լրջօրէն հե-
տեւի բարձրագոյն ուսմանց ու տարիներ յե-
տոյ հայրենիք վերադառնայ՝ որպէս լրիւ
համալսարանական կրթութեան տէր մի անձ:

Ասածներէն պարզ է թէ ինչպէս է որ
ն. Արովեանի անունը յիշատակուած չենք
գտնում Դորպատի համալսարանի Album
Academicumի մէջ: Այդ տեղ, կրկինք, ա-
ռաջ են բերուած բուն իսկ, դիմնադրուարտ
ուսանողների անունները միայն: Բայց եւ
այնպէս, սպասելի էր թերեւ, որ ն. Ար-
ովեանի եւ առհասարակ ազատ ունկնդիրների
մասին եւս համալսարանի պաշտօնական
թղթերի մէջ պահուած լինէին յիշատակու-
թիւններ: Մեր պրպտուսները ցոյց տուին
դժբախտաբար, որ Դորպատի համալսարանի
գիւնանում 1822—1865 թ. առհասարակ վա-
ւերաքուղքեր չեն պահուած ազատ ունկն-
դիրների վերաբերմամբ, իսկ մինչեւ 1829 թ.,
ու 1865 թ. յետոյ էլ, չա՛տ սակաւ:

Արովեանի դորպատեան կեանքի վերա-
բերմամբ նկատուած թերին մի որոշ չափով
լրացնում է նախ իր Յիշատակարանը: Եւ
սակայն, այդտեղ եւս պակաս է ուղղակի,
բացորոշ տեղեկութիւններ իր համալսարա-
նական ուսմանց մասին¹⁰: Արովեան մի առ-
մի անուանում է այն պրոֆեսորների եւ բա-
րեկամների անունները, որոնք պարագայ են
իրեն հետ այս կամ այն առարկայից: Դրանց
թիւում են եղած՝ Ֆրիդրիխ Պարրոտ, Թէո-
դոր Գրաս եւ ուրիշներ:

Այս պարագան սուիթ տուաւ ինձ, որ
Դորպատի համալսարանի գիւնանում պա-
հուած ու այդ անձերին վերաբերող վաւերա-
թուղթերն եւս աչքէ անցընեմ: Դժբախտա-
բար՝ դարձեալ ապարդիւն: Նկատեմ այնու-
ամենանիւ, որ Ֆրիդրիխ Պարրոտի թղթա-
ւորում գտայ յանուն համալսարանի վա-
ւերի մի ձեռագիր գեկոյց, ուր երկիցս յիշա-
տակուած է իսախառուր Արովեանի անունը:
Եւ սակայն գեկոյցը, 25 Մարտ 1830 թ. Դոր-
պատ թուակիր, ուրեմն եւ Արովեանի այն-
տեղ զնալուց առաջ, վերաբերում է Պար-
րոտի վերելքին դէպի Մասիսի գաղաթը: Այդ
վերելքին, յայտնի է, իր խիստ օգտակար
մասնակցութիւնն է բերած Արովեան ու ահա
այդ պարագան է որ շեշտում է Պարրոտ իր
գեկոյցի մէջ: Ապա, ասացինք արդէն, Ս. Նա-
զարեանցի ուսանողական թղթածրարի մէջ
պահուած մի գրութեան մէջ եւս յիշուած է
Արովեանի անունը:

¹⁰ Ն. Արովեան, Դորպատ (եղած է) 1830—
1836 թ.: Անտարակոյս, նա հետեւած է փիլիսոփ.
Փակուրտի քանտրակաւն-պատմական ենթարման
ուսմանց:

Մի երրորդ՝ ցարդ դարձեալ անձանթ
մնացած վաւերագրային յիշատակութիւն ա-
ռաջ բերենք այժմ, որ կրկին վերաբերում է
Արովեանի դորպատեան կեանքին: Յովհան-
նէս Կարբեցի կաթողիկոսի օրհնութեան մի
գիրն է այդ, 1833 թ. Ապրիլ 14 թուակիր,
ուղղուած Դորպատ՝ յանուն Ֆրիդրիխ Պար-
րոտի¹¹: Այդ գրութեան մէջ ասուած է.
«Թոյլ տուք մեզ յանձն առնել ի շնորհս հա-
սարակախնամ գթութեան ձերոյ զօրքացու-
նաչառուր Ապովեանի դորպատեան Աթոսոյս
սրբոյ՝ դարբերաբեալն ի ձէնը»: Արովեանի
դորպատեան կեանքի մասին իր Յիշատակա-
րանում¹² եւ այլ աղբիւրներում բազմաթիւ
ուրիշ տեղեկութիւններ կան պահուած, բա-
րեբախտաբար: Մեր նպատակն էր՝ այստեղ
առաջ բերել այն միայն, ինչ որ ձեռագիր
վաւերաթուղթերի մէջ պահուած է ու ցարդ
անձանթ մնացած գրութեան եւ Արովեանի
կենսագիրներին:

Այս կապակցութեան մէջ ասենք նաեւ,
որ Արովեանի կնոջ՝ Էմիլիա Լօօզէի մասին
նամանակէս վաւերագրային տեղեկութիւն
ձեռք բերինք Ռեւալի (Տալին) քաղաքային
գիւնանում: Ինչպէս յայտնի է՝ Էմիլիա Լօօ-
զէն Ռեւալցի էր ու գտնում էր Թիֆլիսում,
երբ նրա հետ ծանոթացաւ ու ամուսնացաւ
(1839 թ.) Արովեան: Հայրը եղած է արուես-
տով առաջադործ, անունը՝ Christian Loose:
Աղջկայ ծննդեան տարին՝ 1818 թ.:

Բ. ՍՏԵՓԵՆ ՆԱԶԱՐԵԱՆՑ

Դորպատի համալսարանի բուն իսկ՝ ար-
ձանագրուած առաջին հայ ուսանողը եղած է
Ստեփան Նազարեանց: Ու նրա մասին, բա-
րեբախտաբար, բաւական նիւթ կայ պա-
հուած համալսարանի գիւնանում: Արդ նիւ-
թերը բոլորովին նոր լոյս են սփռում Նազա-
րեանցի ուսանողական կեանքի վրայ, որոնք
ցարդ միանգամայն անյայտ մնացած են իր
կենսագիրներին: Այլ աշխատութեան վերա-
պահելով այդ նիւթերի լայն օգտագործումը
եւ հրապարակումը, այստեղ առաջ կը բե-
րենք էական կէտերը միայն:

¹¹ Գրութիւնը պահուած է Ճ. Պարրոտի թանու-
հիւնքի մօտ: Դորպատից Բերլին վերադարձիս այցե-
լիցի նրանց (Ռիգա), որոնք սիրալիորէն ցոյց տուին
ինձ գրութիւնը: Այդ մասին մանրամասն այլ առ-
թիւ:
¹² Քաղաւածաբար առաջ բերուած Ներսէս Տէր-
կարապետեանի «Ն. Արովեան» կենսագր. աշխատու-
թեան մէջ (Թիֆլիս 1897, Բ. սպ. 1911):

Նախ ասեմ, որ Դորպատի գիւնագրայի
— դարձեալ գերմանական — գիւնի գոր-
ծերը պրպտելիս ինձ համար անսպասելի
կերպով հանդիպեցի Ստեփանոս Նազարեան
անունը: Այդ վարժարանի աշակերտական
Արձանագրութեանց Մատեանի (Inskriptions-
buch) 1831—1862 թ. վերաբերեալ ձեռագիր
հատորի մէջ, թիւ 1232ի տակ, նշանակուած
է Ստեփանոս Նազարեան: Իր մասին տրուած
է նաեւ տեղեկութիւնները. հօր ա-
նունը՝ Եսայի քահանայ (մեռած), ծննդեան
թուականը եւ տեղը՝ 15 Մայիս 1814, Թիֆլիս:
Գիմնադրա (Գ. դասարան) ընդունուած է
(Սեպտ. 1833 թ.): Դուրս է եկած (նոյն դա-
սարանից) 8 Ապր. 1834 թ.:

Նազարեանց գիմնադրա մտած է, ի
հարկէ, այն աւարտելու եւ այդպիսով, որ-
պէս բուն իսկ, արձանագրուած ուսանող հա-
մալսարան ընդունուելու նպատակով: Ըստ
մատեանի՝ շուտով միտքը փոխել է նա,
երեւութիւն՝ շուտով միտքը փոխել է նա,
կամեցել է աւելի առաջ մտնել համալսարան,
կամեցել է աւելի գիմնադրայից ու
ուստի եւ դուրս է եկել գիմնադրայից ու
մասնաւոր ձեռով նախապատրաստուել՝ հա-
մալսարան ձեռով ժամանակում, որպէս
մեծատարար կարճ ժամանակում, որպէս
արտաքին հասունութեան վկայական ձեռք
բերելու համար: Ու այդ յաջողուել է նրան,
1835 թ. Յունիսին, համալսարանում տալով
պահանջուած արտաքին քննութիւնը¹³:

Նազարեանց համալսարան ընդունուել է
1835 թ. Յուլիս 29ին: Ուսանողական Album
Academicumի (եւ ուրիշ թղթերի) մէջ իր
արձանագրման (Immatrikulation) թիւ¹⁴:
1835 թ. Յուլ. 29ից մինչեւ 1836 թ. Յու-
նուար 18 նա եղած է stud. cam., այսինքն՝
հետեւել է տնտեսական (կամերալ) գիտու-
թեանց: Այնուհետեւ, մինչեւ նոյն թուականի
(1836) Նոյեմբեր 16ը, եղած է stud. med.
ուրեմն փոխել է ուսման ճիւղը ու հետեւել
բժշկական գիտութեանց: Այդ ճիւղն եւս
շուտով թողել է ու վերջնապէս անցել փիլի-
սոփայական ֆակուլտետ, որպէս stud. phil.,
1837 թ. սկզբից մինչեւ 1840 թ. ամառը,

¹³ Այս եւ հետագայ տեղեկութիւնները բաղուած
ենք համալսարանի Գիւնի գործերից: Նկատենք եւ
այն, որ գիմնագրայի աշակերտական Արձանագրու-
թեանց Մատեանում նշանակուած է՝ Ստեփանոս Նա-
զարեան, իսկ համալսարանի գործերում՝ Ստեփան Նա-
զարեանց: Վերջինիս փոխարէն երբեմնապէս — մա-
նուսնակ սկիզբները — գրուած է՝ Նազարով:
¹⁴ Այդ ցոյց է տալիս, որ համալսարանի հիմնա-
դրութիւնից (1802 թ.) սկսած՝ Նազարեանց եղած է,
ժամանակ. կարգով, 3483րդ արձանագրուած ու-
սանողը:

